ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՏԿԵՆ-ԴՇ-25/01

ք. Երևան

« 03 » հունվարի 2025թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին) ի դեմս գլխավոր քարտուղար Արթուր Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ի դեմս տնօրեն Հարություն Մովսիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ» 1073 ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) «Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություններ» 11001 միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է ծրագրի միջոցառման իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ **22,000,000.0 /քսաներկու միլիոն/ ՀՀ դրամ**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագրի միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված N 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ.

2.1.3. միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառման իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումը չի համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառման արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառման) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել միջոցառման իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.7. Որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն դրամաշնորհի պայմանագրով նախատեսված միջոցառման տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, Կազմակերպությունը միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ պետք է վերադարձնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026թ. հունվարի 24-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառման իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 Հավելվածով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված վճարման չափից:

4.2. Եթե Կազմակերպության կողմից տարվա կտրվածքով մատուցված Ծառայությունների՝

ա/ փաստացի ծավալները գերազանցում են սույն պայմանագրի 1.2. կետով նախատեսված սույն պայմանագրի շրջանակներում մատուցվող Ծառայությունների առավելագույն քանակը, որի արդյունքում տարվա կտրվածքով սույն պայմանագրի 1.1 կետի համաձայն հաշվարկված վճարման ենթակա գումարը գերազանցում է սույն պայմանագրի 1.1. կետում նշված դրամաշնորհի առավելագույն չափը՝ դրամաշնորհի փաստացի տրամադրումը կատարվում է դրամաշնորհի վերոգրյալ առավելագույն չափի սահմաններում,

բ/ փաստացի ծավալները չեն գերազանցում սույն պայմանագրի 1.2. կետով նախատեսված սույն պայամանագրի շրջանակներում կատարվող աշխատանքների առավելագույն քանակը, որի արդյունքում տարվա կտրվածքով սույն պայամանգրի 1.1. կետի համաձայն հաշվարկված վճարման ենթակա դրամաշնորհի գումարը պակաս է լինում սույն պայմանագրի 1.1 կետում նշված դրամաշնորհի առավելագույն չափից՝ դրամաշնորհի տրամադրումը կատարվում է՝

- սույն պայմանագրով սահմանված դրամաշնորհի առավելագույն չափով, եթե Կազմակերպությունը ներկայացնում է դրամաշնորհի առավելագույն չափին համապատասխանող և /կամ/ գերազանցող գումարի չափով փաստացի կատարված ծախսերը հիմնավորող համապատասխան սկզբնական և այլ փաստաթղթեր: Եթե ներկայացված փաստացի ծախսերը փոքր են լինում սույն պայմանագրով սահմանված դրամաշնորհի առավելագույն չափից, ապա դրամաշնորհի տրամադրումը կատարվում է վերոգրյալ փաստացի ծախսերի չափով, բայց ոչ պակաս սույն պայամանագրի 1.1. կետի համաձայն հաշվարկված դրամաշնորհի գումարի,
- սույն պայմանագրի 1.1. կետի համաձայն հաշվարկված դրամաշնորհի գումարի չափով, եթե Կազմակերպությունը չի ներկայացնում փաստացի կատարված ծախսերը հիմնավորող համապատասխան սկզբնական և այլ փաստաթղթեր:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի,

ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված N 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ք. Երևան 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ ք. Երևան 0025, Չարենցի 46
Կենտրոնական գանձապետարանի Գործառնական վարչություն h/h 900011033405 ՀՎՀՀ 02815457	Կենտրոնական գանձապետարանի Գործառնական վարչություն h/h 900018001587 ՀՎՀՀ 01545119
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար	«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ա. Երիցյան	**Հ. Մովսիսյան**
L.S. (ստորագրություն)	L.S. (ստորագրություն)

ուՀավելված N 1
2025թ. հունվարի 3-ին կնքված
N ՀՀ-ՏԿԵՆ-ԴՇ-25/01 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ք. Երևան 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3

Կենտրոնական գանձապետարանի Գործառնական վարչություն
հ/հ 900011033405
ՀՎՀՀ 02815457

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար

Ա. Երիցյան

Կ.Տ.

(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ
ք. Երևան 0025, Չարենցի 46

Կենտրոնական գանձապետարանի Գործառնական վարչություն
հ/հ 900018001587
ՀՎՀՀ 01545119

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Հ. Մովսիսյան

Կ.Տ.

(ստորագրություն)

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N N	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջ վող գումարը (դրամ)
1.	Ընդերքի մասին տեղեկատ-վության տրամադր-ման ծառայու-թյուններ	1. Երկրաբանական տեղեկության ընդունում և պահպանում; 2. Ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծում և վարում; 3. Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարում; 4. Օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրի վարում; 5. Ընդերքօգտագործման իրավունքների պետական հաշվառում; 6. Ընդերքի մասին տեղեկատվության վերլուծում և տրամադրում լիազոր մարմիններին:	Երկրաբանական տեղեկության ընդունում և պահպանում, ընդերքօգտագործ ման ֆոնդի ստեղծում և վարում, ՕՀՊՊՀ և ՕՀՊԿ վարում, իրավունքների պետական հաշվառում, տեղեկատվության վերլուծում և տրամադրում	Երկրաբանական տեղեկության միասնական համակարգի և ընդերք-օգտագործման ֆոնդի ստեղծում և վարում, ամբողջակնու-թյան և մատչելիության ապահովում	31.12.2025թ.	
Ընդամենը						**22,000,000**

Հավելված N 2
2025թ. հունվարի 3-ին կնքված
N ՀՀ-ՏԿԵՆ-ԴՇ-25/01 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ք. Երևան 0010, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 3

Կենտրոնական գանձապետարանի
Գործառնական վարչություն
h/h 900011033405
ՀՎՀՀ 02578338

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
գլխավոր քարտուղար

Ա. Երիցյան

Կ.Տ.
(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հանրապետական երկրաբանական
ֆոնդ» ՊՈԱԿ
ք. Երևան 0025, Չարենցի 46

Կենտրոնական գանձապետարանի
Գործառնական վարչություն
h/h 900018001587
ՀՎՀՀ 01545119

«Հանրապետական երկրաբանական ֆոնդ»
ՊՈԱԿ-ի տնօրեն

Հ. Մովսիսյան

Կ.Տ.
(ստորագրություն)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳԻՐ

Ծրագրային դասիչը		Անվանումը՝ **Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ**	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
1073	11001	***Միջոցառման անվանումը՝*** Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություններ ***Միջոցառման նկարագրությունը՝*** Երկրաբանական տեղեկության ընդունում և պահպանում, ընդերքօգտագործման ֆոնդի ստեղծում և վարում, ՕՀՊՊՀ և ՕՀՊԿ վարում, իրավունքների պետական հաշվառում, տեղեկատվության վերլուծում և տրամադրում				
Չափորոշիչներ						
Հաշվառված երկրաբանական ուսումնասիրությունների քանակ, հատ				10		25
Ընդերքօգտագործման իրավունքների (գործող) թիվ, հատ				480		480
Օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների թիվ, հատ				400		450
Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում հաշվառվող հանքավայրերի քանակ, հատ				1005		1010
Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում ստացած տեղեկությունների ընդունում, թվայնացում և կայքում տեղադրում, ինչպես նաև առկա ողջ տեղեկատվության պահպանում, նյութերի թիվ				1615		1625

Լիազոր մարմիններին տրամադրված երկրաբանական տեղեկությունների քանակ, հատ		350		700
Ներկայացված կոորդինատների սահմաններում ընդերքի տեղամասերի վերաբերյալ տրամադրված տեղեկությունների քանակ (համադրված տեղամասերի քանակ), հատ		100		175
Ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնվածության վերլուծություն ըստ մարզերի, օգտակար հանածոների տեսակների, դրանց փոփոխությունն ըստ տարիների և եռամսյակի՝ (հաշվետվությունների քանակ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի), հատ		22		44
Օգտակար հանածոների պաշարների քանակական շարժի վերլուծություն ըստ մարզերի, տարիների, տեսակների՝ ներկայացնելով տեղեկություններ օգտակար հանածոների պաշարների քանակական ծավալների փոփոխության վերաբերյալ (հաշվետվությունների քանակ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի), հատ		11		11
Հանքավայրերի համակարգում ըստ մարզերի, օգտակար հանածոների տեսակների (այդ թվում ստորերկրյա ջրերի)՝ ներկայացնելով առաջարկություններ մարզի ներուժի հետագա աճի կամ սահմանափակումների վերաբերյալ (հաշվետվությունների քանակ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի), հատ		11		11
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)	**4,400.0**	**9,900.0**	**15,400.0**	**22,000.0**